

Lեզումագրական և ասութեածան

ՀՆԴԵԿՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՇՐՋԱՆ^(*)

Աստայնանկութեան արհեստը ծանօթէր Հնդեւրոպացիներին. նրանք գիտէին թել մանել, մանածը հիւսել, կարել և գրանով հագուստ ու կօշիկ պատրաստել: «Մանել» նշանակութեամբ կար հնիս. *sne-արմատը, որի ժառանգներն են լու. nere, jn. nēd, ուսւ. nītī «թել» և թերես նաև հրգ. snuor «կապ»: «Հիւսել» բառի գոյութեան ապացոյցներն են հրգ. weban, jn. huphaino, qñq. ubdaina «հիւսուած.ք», պրս. baftan «հիւսել», սանս. vabh «հիւսել»: ակարել» բառը յայտնի կերպով ցոյց են տալիս սանս. si'vgati, lñf. siúti, հոլ. s'iti, հրգ. siula «հերիւն, մախսաթ», որ կարելու գործիքն է: «Հագնուել» գաղափարի համար ունինք au, u, wes արմատը, որի ժառանգներն են հյ. ագանիլ, «հագնիլ», սուլ ակօշիկ», զգեստ, սանս. va'ste, jn. féstai, ltn. vistis.

Տեղից տեղ ճամբորգութեան համար Հնդեւրոպացիք ունէին հասարակ սայլեր (հմտ. հոլ. voz'u, jn. óchos, հրգ. wagan, իոլ. fen սայլ. իսկ «սայլով ճամբորգելու» իմաստով սանս. va'hati, qñq. vazaiti, հոլ. vezo, lñf. vez'ù, ltn. veho):

Անիւրի համար եղած բառերը թէն մի ընդհանուր ձեի չեն յանգում, բայց ռառանցքն նշանակող բառը ընդհանուր է եւ ծագում է միւնոյն aks — արմատից (սանս. a'ksas, jn. a'ksón, հոլ. osí, ltn. axis: Անուրի գունզը կոչւում է սանս. na'bhis, հրգ. naba, հպրուս. nabis, որոնք բուն նշանակում են «պորտ»: Գետերի վրայ ճամբորգութեան համար կային նաւակներ. հմտ. սանս. na'us, պրս. nav, հյ. նաւ, jn. nauš, ltn. navis, իոլ. nau ան. թիր և թիավորելու համար հմտ. հիսու. րօա: Մինչև անդամ նաւի ցռուկը նշանակելու համար կայ մի ընդհանուր բառ, որ հոլ. kruma, jn. prúmno.

(*) Շարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Ճայ Լեզուի» գարձեն (Ա. Գլուխ):

Առուտուրի կամ վաճառականութեան հետքերն են ցոյց տալի հետեւեալ բառերը.

սանս. kr̄mami հպրուս. krit'nu, հիոլ. crenim,

գալլ. prynaf, քուչ. karyor, jn. priasthai, որոնք նշանակում են գինելո. — սանս. arghá «գին», արժէք», թոխար. arcant արժէ, զնդ. arəj'ah զին արժէք, lñf. algá վարձ, պրուս. algas վարձ, jn. alphé չահ. — սանս. vasna, հյ. զին, jn. onos «զին», onéomai «զնելո», ltn. vonum dare «վաճառելո», որոնց հնդեւրոպական նախաձեւն է *vesno-, *vosno- «զին»: Անշուշտ այդ հնագոյն չրջանում զրամ չկար, որ շատ ուշ լիւզիացէք հնարեցին: Այդ միջոցին առեւտուրը կատարւում էր փոխանակութեամբ, որի ժամանակ զնողը միաժամանակ վաճառող է կամ վաճառողը միաժամանակ զնող. զրա համար էլ երկու գաղափարները խառն են և լու. venum dare «վաճառելո» նոյն է հյ. զին բառի հետ. զոթ. kaupon և հիսու. mango նշանակում են թէ սկնելո և թէ չվաճառելո: Վաճառականութեան զլխաւոր նիւթն էր անտառների հօտերը և զրա համար սկսուած նշանակող բառը ստացաւ «հարսութիւն», ինչք, զրամ» նշանակութիւնը. հմմտ. սանս. թաշ, ltn. pecus, հրգ. fihi սկսութիւն, զրամ»: Վաճառականութեան հետ կապուած է թիւը և հաշիւը, չափն ու կէնուը. վերջինների մասին չենք կարող ոչինչ ասել, բայց առաջինների մասին Հնդեւրոպացիք բաւական զարգացած էին որովհետեւ գիտէին հաշուել գոնէ հարիւրով. հազարի համար ընդհանուր բառ չկայ. բայց այսքանն էլ մեծ բան է, որովհետեւ արզի վայրենիները երեքից այն կողմ հաշուել չգիտեն:

Եթէ Հնդեւրոպացիք մետաղագործութեան, արհեստների և վաճառականութեան մէջ թոյլ էին, ընդհակառակը խաշնարածութեան, անասնապահութեան և որորդութեան մէջ յաջողակ էին: Դրա ապացոյցն այն է՝ որ աւանդուած են մեզ տեսակ անասունների և թռչունների անուններ: Դրանցից ոմանք ընտանի անասուններ են ներկայացնում, ուրիշներ

վայրի անասուններ. երբեմն էլ կարելի չէ սրոշել թէ յիշատակուած անասունը ընտանիք է թէ վայրի կամ թէ ի՞նչ սեսի է, արո՞ւ թէ էզ: Այսպէս յայտնի են մեզ՝ տաւար, ցուլ, եղ, հորթ կամ երինջ, ոչխար, գառն, ձի, այծ, խոզ կամ վարազ, չուն, գայլ, արջ, աղուէս, եղջերու, թռչուն, սագ, բագ, արծիւ, կռունկ, տորդիկ, մեղու, սրանցից դուրս ընդհանուր են և մուկ, օձ, ճանճ, մրջիւն, լու, անիծ, որոնց նշանակութիւնը զիւղական կեանքում յայտնի է. էշը անծանօթ է հնդեւրոպացիներին. զրա ծագումը արեւելեան է. էշը անծանօթ լինելով՝ չկայ նաև ջորի: Հնդեւրոպացոց անծանօթ էր նաև կատուն: Կատուն շատ հնապէս ընտանեցրած էր եթովպիայում, որտեղից չուրջ Ն. Ք. 2000 թուին եզիպտոս բերուեց. այստեղից Ն. Ք. Ե. դարում հասաւ Յունաստան, ուր կոչուեց Ելուրոս, այսինքն պոչ շարժող: Յ. Ք. Ա. դարի վերջում կատուն բերուեց Հռովմ և յետոյ տարածուեց ամէն կողմ: Ճագարը և նապաստակը անծանօթ էին Հնդեւրոպացոց: Անծանօթ էր նաև աքւորը, որ գուրս եկաւ Հնդկաստանից. Ն. Ք. Զ. դարում երեւաց Յունաստանում և կոչուեց կուռող. այնտեղից անցաւ Եւրոպայի միւս մասերը. Հռովմայեցիք և կելտերը կոչեցին կոչող, իսկ Գերմանացիք՝ երգող:

Թէ նախկին հնդեւրոպացիք առաւելապէս խաչնարած ժողովուրդ էին, այդ ցոյց է տալիս հօս բառի զոյութիւնը և նրա սոսացուածք, գոյք, ինչք, հարստութիւն և նշանակութիւնը: Հնդեւրոպացի ժողովուրդի ամբողջ հարստութիւնը իր հօսն էր: Նազիտէր օգտագործել ոչխարի բուրդը: Այծի մորթից պատրաստում էին կաշի, որի համար էլ այս բառը ստուգաբանում է այծ տառից: Գիտէին կթել անասունների կաթը, որից պատրաստում էին իրենց սննդեան կարեւոր մէկ մասը: Հնդեւրոպացիք ճանաչում էին նաև մեղրը, բայց այդ մեղրը ստանում էին ո՛չ թէ մեղուարուծութեամբ, այլ ծառերի խոռոչներից հաւաքելով՝ մեղուների պատրաստած մեղրը. սրա համար էլ փերակ բառի համար ընդհանուր ձեւ գոյութիւն չունի հնդեւրոպական լեզուախմբի մէջ: Մեղրից գիտէին պատրաստել մի տեսակ խմբիչք որ նոյնպէս կոչում էր հնիւ.

մեղնու. դա պատրաստում է այսպէս. մեղրը հալեցնում են ջրի մէջ, մի քանի օր դնում են արեւի տակ, խմորում է և գառնում է նուրբ ոգելից ըմպելիք դուրեկան համով: Գինի շինել չգիտէին: Աւելի յետոյ, երբ գինին մտաւ հնդեւրոպական ժողովուրդների մէջ, տեղ տեղ յիշեալ մեղնու բառը յատկացուեց նոր ըմպելիքին:

Զկների գործածութիւնը անշուշտ յայտնի էր, բայց մեծ տեղ չէր բռնում. զրա ապացոյցն այն է որ ձկների զանագան տեսակների անունները ընդհանուր տարածուած չեն. իսկ ձուկ բառի համար մի և ընդհանուր բառ չկայ, այլ կան զանագան բառեր:

Խաչնարածութեան հետ հնդեւրոպացիք գիտէին նաև երկրագործութիւն. հերկելու համար կայ մի ընդհանուր բառ՝ հնիւ. արը, որից և կազմում է արօրը: Հերկելու կամ վարելու համար գործածում էին եղը: Լուծը կոչուում է եռլզու: Հնդեւրոպացիներից արօրը փոխառութեամբ անցաւ նաեւ ուղրովիննական ժողովուրդներին: Ցանել գաղափարի համար ունինք հնիւ. սի արմատը: Կայ նաև հատիկ բառը. յիշւում են մի քանի տեսակ հացահատիկներ, բայց յատկապէս զարին:

Զաղացպանութեան արհեստին ծանօթ էին հնդեւրոպացիք. հացահատիկները աղում էին երկու ձեւով. կամ ջաղացքի մէջ և ստանում էին բարակ ալիւր, և կամ քարով ծեծում էին սանդի մէջ, կճեղները հանում և ստանում էին մի տեսակ ցաւար: Այսպէս՝ ջաղացքում աղալու համար ունինք հնիւ. մելք և ալ արմատները. առաջինից է հայերէն մլաղաց, երկրորդից հայերէն պալալ: Երկանը կոչում է ցարանա, որից հայերէն երկան: Սանդի մէջ ծեծելու նշանակութեամբ ունինք հնիւ. պիտիս արմատը: Անասուններին տրելու համար համար ծանօթ է յարդը:

Ծառերի համար շատ բառ չկայ. ընդհանրապէս ծառ և փայտ գաղափարի համար ունինք հնիւ. դորու: Անսարը զարմանալի կերպով անյայտէ: Մասնաւոր ծառերից յայտնի են կաղնին, հացին, փեկոնը, ցարասին, ուռին, կարեւոր էր յատկապէս այս ծառի ճիւղը՝ որ ուղրելով իրբեւ թել կամ չուան էին գործածում և այս պատճառաւ կապ, չուան նշանակող բառերը մի

քանի լեզուների մէջ ծագում են ուրի ձեւից :

Բուսական անունների սակաւութիւնը կինդանիների համեմատութեամբ ցոյց է տալիս որ հնդեւրոպացոց գլխաւոր անուննը որսի կամ ընտանի կենդանիների միան էր (հնիւ . մեմսա) միսը կամ կերակուրը գիտէին եփել քանի որ կրակ ունէին . գրահամար էլ կայ ունու բառը , որից հայերէն հում : Կերակուրների պատրաստութեան ժամանակ գիտէին գործածել աղը (հնիւ . սալա) , որ անհրաժեշտ պահանջ է բուսակերների համար . բոյսը մարմին մէջ ծծում է կալին , որ պէտք է լրացնել աղի միջոցով : Յայտնի է մսով եփած մի տեսակ ջրալի կերակուր , որ կոչւում է հնիւ . Եռև : Մսի հետ միաժամանակ գործածում էին կաթը և կաթից պատրաստուած սերն ու կարագը :

Հնտանեկան կազմակերպութիւնը . նաև հապետական ձեռով էր , ամուսինը տան մեծն էր , հրամայողը և կառավարողը . եւ այս պատճառաւ ամուսին բառը նոյն է պետ , տէր բառի հետ հնդեւրոպական լեզուի մէջ : Բացի հայր , մայր , ուստր , գուստր , եղբայր , քոյր բառերից , որոնք ընդհանուր հնդեւրոպական են , կային ազգականութիւն ցոյց տուող հետեւալ աստիճանները . նու , սկիսուր , աայգը , տալ , ներւ Այս բոլորը պատկանում են արական կողմի ազգականներին իսկ իգական կողմի ազգականների համար ընդհանուր բառ չկայ լեզուների մէջ . եղածը խառն ու չփոթ է , այսպէս կայ ամսւանու եղբայր կամ քոյր , բայց չկայ կնոջ եղբայր կամ քոյր : Աւելի ընդհանուր են աղջկայ ամուսին նշանակող բառերը . բայց այդ բառերը մէկ ձեի չեն վերածում և նշանակում են զանազան ազգականներ . ընդհանուր բառեր չկան նաև կողմանակի գծով ազգականների համար . ինչպէս պապ , հանի , մօրեղբայր , հօրեղբայր , թոռ , քեռորդի կամ քրոջ աղջիկ , եղբօրորդի կամ եղբօր գուստար են .

Այս բոլորը ցոյց է տալիս ընտանեկան մի այնպիսի գրութիւն , ուր կինը գրսից մտնում էր ամուսնու ընտանիքի մէջ , բայց ամուսինը կնոջ ընտանիքի հետ անձուկ կապակցութիւն չունէր : Ամուսնութեան հանգամանքները ցոյց է տալիս հնիւ . պրեկ բառը , որ բունում էր մի աւելի բարձր տեղ , սովորաբար անբնակ էր և միայն վտանգի դէպքում զիւզերի բընակութիւնը փախչում էր այնտեղ ապաւէն փնտուելու համար :

ցընել , խնդրել , բայց մասնաւորապէս նշանակում է աղջիկ ուզել , որից յառաջանում է հարսն բառը : Նոյնպէս հնիւ . վեցէ բառը , որ բուն նշանակում է վարել . առաջնորդել , տանիլ , բայց յատկապէս նշանակում է կին կամ հարս բերել տուն , որից և յառաջանում են ամուսնունալ նշանակող բառերը զանազան լեզուների մէջ : Հարս լինելուց յետոյ՝ կինը նոր տան մէջ դառնում էր տիրուհի . և այս ցոյց է տալիս հնիւ . պետնի բառը , որ պետ բառի իգականն է : Ամուսնի մահից յետոյ՝ կինը դառնում էր այրի (հնիւ . վիտհաւա) , որի համազօրը պակասում է հայերէնի և յունարէնի մէջ : Հակառակը , այսինքն այրիացած ամուսնու համար՝ բառ չկայ . սա նըշանակում է թէ այրիութիւնը կնոջ համար մի առանձին գրութիւն էր ստեղծում . նա այլևս մարգու չէր գնում և կառավարում էր մեռած ամուսնու տունը՝ իբրև տէր և տիրուհի : Իսկ ամուսնու համար այրիութիւնը բոլորովին նշանակութիւն չունէր , որովհետեւ կարող էր նորից ամուսնանար :

Թէ ամուսնութիւնը հնդեւրոպացոց մէջ միակի՞ն էր թէ բազմակին , սրա համար ոչ մի լեզուական ապացոյց չունինք . բայց հարճ գաղափարի համար ընդհանուր բառ չկայ . ուստի հաւանաբար միակին էին :

Ծնկերական խմբակցութեանց ամենափոքր աստիճանն տունն է , որ ընդհանուր հնդեւրոպական բառ է (հնիւ . դոմե) : Տանտէրը իշխանութեան առաջին աստիճանն է : Ծների խմբակցութիւնը կազմում է զիւզ կամ ցեղ , որ համարում է մի մեծ տուն կամ մի մեծ ընտանիք : Քաղաքը , հնդեւրոպական հասկացողութեամբ , ամբացրած տեղ կամ բերդ նշանակութիւնն ունի . ըստ այսմ՝ հնդեւրոպացոց ժամանակ ժողովուրդը ընակում է զաշտի գիւղերում կամ ազարաբաններում . քաղաքը , որ գտնում էր մի աւելի բարձր տեղ , սովորաբար անբնակ էր և միայն վտանգի դէպքում զիւզերի բընակութիւնը փախչում էր այնտեղ ապաւէն փնտուելու համար :

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ
(Շարունակելի)